

“ԳԱԼՈՅ Է ԱՆ ՆՈՎԻՆ ՄԱՐՄՆՈՎ”

ՅԻՍՈՒՍ ՓՐԿՉԻՆ ԵՐԿՐՈՐԴ ԳԱԼՈՒՍՏԸ

1. **“Գալոց է նովին Մարմնով”**
2. **Մարդեղացեալ Յիսուս և Յողաթական Քրիստոս, Միածինն Յիսուս**
3. **Զեմ Ուզեր Գիտնալ Ուրիշ Բան Միայն Խաչեցեալ Յիսուս Քրիստոս**
4. **“Իմ Հօրս Տան Մէջ Շատ Օթեւաններ Կան”**
5. **“Այս Յիսուսը որ Երկինք Համբարձաւ. Օր Մը Դարձեալ Պիտի Գայ Այնպէս՝ Ինչպէս Անոր Երկինք Երթալը Տեսաք”**

THE SECOND COMMING OF JESUS OUR SAVIOUR

ԱԼՊԷՌ ՆՈՐԱՏՈՒՆԿԵԱՆ
ԿԱՅ-ՔՐԻՍՏՈՆԵԱՅ
2004

Ձ Օ Ն Ե Ր Ք

Այս համեստ խորհրդածութիւններս կը
ձօնեմ բոլոր հաւատակից եղբայրներուս ու
բոյրերուս, որոնք գիտակցօրէն աղօթած են ու
կ'աղերսեն Աստուծոյ ըսելով.

**“Եկեսցէ արքայութիւն Քո, եղիցին
կամք Քո ոպէս յերկինս՝ և յերկրի”:**

--Ա. Ն.

«ԳԱԼՈՅ Է ՆՈՎԻՆ ՄԱՐՄՆՈՎ»

Քսան դարեր շարունակ՝ հաւատացեալ Քրիստոնէաներ աղօթած են և խնդրած *“Եկեցո՛ւ Արքայութիւն և Բոյ”* որ համաշխարհային հաւատացեալներու կարգախօսն ու մարտակոչը դարձած է: Ընդհանրապէս “կարգախօս” կամ “մարտակոչ” *զինեա՛լ և վայրագ* զօրաշարժի և պատերազմի պատրաստութիւն կը նշանակէ:

Մակայն՝ ՉՈրդ Դարու համաշխարհային Բաղաճականութեան մէջ յայտնուեցաւ ու տեսնուեցաւ **անգէ՛ն** կարգախօսութիւններ և մարտակոչներ: Հնդկաստանի միլիոնաւոր թշուառներու մէջ յայտնուեցաւ Մահաթմա Կանտին: Միացեալ Նահանգներու սեւամորթներուն մէջ հանդէս եկաւ Մարթին Լուտեր Զինկ, որոնք փորձարկել ջանացին Լեւ Թոլսթոյի վերատեսութեան ենթարկած, *«անզէն և անձնազոհ»* կարգախօսն ու մարտակոչը:

Ի՞նչ կը նշանակէ «Նովին մարմնով» գալը:

Ընդհանրապէս ընկերա-բաղաճական վարչակարգերը բուն յեղաշրջող յեղափոխականներ, որոնք կը պատկանին աշխատաւորական և կեղեքուած դասակարգին, երբ ձեռք առնեն իրենց երկրին կառավարելու դրութիւնը, անսպասելիօրէն կը մոռնան իրենց համեստութիւնը, ժողովրդային դասակարգին պատկանիլը և իրենց Բաջած անիրաւութիւնները, ու կը դառնան անզօրութեան և վրէժխնդրութեան մարմնացումը:

Երբ ուսումնասիրենք Ֆրանսական և Համայնավար Յեղափոխութիւնները, հոն կը տեսնենք անիրաւուած և բանտարկուած հասարակ մտաւորականներու բազմութիւն մը որ ներկայացած էր որպէս ժողովուրդի կարեկից, արդարամիտ և մարդասէր: Մարդկային ընկերութիւնը բարւոճելու, պաշտպանելու և խնամելու ոգին ցոյց տուող յեղափոխականներ երբ գրաւեցին պետական գահը, մոռցան խիղճ, կարեկցութիւն և տարրական մարդկայնութիւն:

Ֆրանսական Յեղափոխութեան՝ Մարաթ և Ճորճ Տանթոն, անզօրէն գլխատեցին հազարաւորներ: Անխղճօրէն կոտորեցին և այրեցին հարիւրաւոր գիւղեր և աւաններ իրենց ամբողջ բնակիչներովը: Որովհետեւ անոնք մերժած էին յեղափոխական վարչաձեւի *ամբողջատիրական* դրութիւնը:

Համայնավար Յեղափոխութեան ազատագրական կարգախօսը դեռ չ'լրացած, սուտի և կեղծիքի կերտիչ՝ Մթալին և իր վոհմակը սովամահ ըրին Ուֆրանիոյ տասը միլիոն բնակիչները, առաւել տասը միլիոն մտաւորականներ և ազատատենչ հայրենասէրներ, որոնք ամբողջացան Միպերիոյ տանջարանները և դանդաղօրէն անյայտացան:

Համեստ կարծուած բազմաթիւ ողորմելիներ, պատերազմի ջրջանին երբ հարստացան, մոռցան իրենց համեստ սակայն առաքինի ընկերներն ու բարեկամները և դարձան ցուցամոլ և անկարեկից հանդէպ կարօտեալ-

ներուն: Իրենք զիրենք նկատեցին «ժլատ» բարձրաստիճան:

Սոյն հայեացքով երբ կարդանք, Յիսուսի ակնարկուած «Նովին Մարմնով» բառերը, յայնժամ բացայայտօրէն կը հասկնանք թէ Յիսուս Բրիստոս՝ տիեզերքի Տէրն ըլլալով որպէս փառապանծ Իշխան, նաեւ է **մարմնաւորացի**: Այլ խօսքով, Ան չէ ուրացած Իր նախորդ Մարդեղութեան մարդկային սերունդը: Յիսուս **խնայեցաւ** Յեղափոխականն է, ոչ թէ զենքի՛, բունութեան և ուրիշներու վրայ ապօրէնօրէն ճնշող մը, այլ՝ **սիրելով** այս երկրայինները և մարմնաւորները ինչպէս կը կարդանք Յովհաննու Առաքեալին սրբազան Աւետարանին 17րդ Գլխուն 6րդ համարին մէջ ուր Յիսուս կ'ըսէ.

**«Ըն ա՛նու նդ յայտնի ըրի այն մարդոց գործնք
աշխարհէ ինծի առիք. Բուկդ էին, ու ինծի
առիք զանոնք և Բու խօսեցաւ պահեցին»:**

Յաղթական և անպարտելի մեր Տէրը չ'ուրանար այս *աշխարհի* մարմնաւոր և մեղաթափախ մարդկութիւնը՝ Ի՛ր բարեկամները: Յիսուս Իր "աննուագ մարդկութեամբ և անթերի աստուածութեամբ" պիտի վերադառնայ այս երկրագունտի վրայ **"Նովին Մարմնով"**, որովհետեւ երբ եկաւ առաջին անգամ յայտնելու Հօր Աստուծոյ սէրը համայն մարդկութեան, չէր եկած որպէս հրեղէն հրեջատակ, այլ "Ստեղծիչը ստեղծուածին մէջ մարմնացաւ", Բանն Աստուծոյն ոչ թէ մարմին *առաւ*, այլ՝ "մարմին *եղեւ*" -- Յով. Ա.14: Մեր պանծալի Փրկիչը ոչ թէ մեզ՝ մարդկայիններս չ'ուրանար, այլ մեզ *եղբայրներ* ալ կը կոչէ, **Երբ. Բ.11-12,**

*«Անա թէ ինչու, ան ամօթ չի համարեր եղբայրներ կոչել
զանոնք և ըսել. "Ըն ա՛նու նդ պիտի յայտնեմ իմ եղբայրներուս»:*

Հաւատացեալներ՝ ունայն տեղ չեն ցնծերգեր "գալոց է Նովին Մարմնով" երկու հազար տարիներ: Որպէս ուխտաւոր և նուիրեալ հաւատացեալներ՝ մենք պիտի սպասենք և յուսանք որովհետեւ Ան խոստացաւ, *«Երբեք ու ձեզի համար ալ տեղ պատրաստեմ, դարձեալ կու գամ Բովս կ'առնեմ ձեզ»:*

«Դարձեալ կու գամ»ը՝ Յիսուսի **պատուոյ՛ խօսքն** է: Վախժուսն կամ ուխտուն տարիները, մարդ-արարածին համար երկար ժամանակաշրջան մը կրնայ թուիլ, ինչպէս թիթեոնիկի մը համար որուն կեանքի երկարութիւնը երկու օր է, երկու օրը՝ յաւիտենականութիւն կը սեպուի: Նոյնպէս երկու հազար տարին մարդոց համար երկար կրնայ սեպուիլ, սակայն յաւերժին մէջ գործող Աստուծոյ համար, միայն րոպէ մը կը համարուի:

«Գալոց» բառը հայերէն լեզուի մէջ խոր իմաստ կը պարունակէ: «Գալ» և «զգալ» բառերը ինսամիական սերտ յարաբերութիւններ ունին:

Այս մասին Հր. Աճառյան կը գրէ.
"Զգալ" կազմուած է զ նախդիրով՝ *զալ* բայից, հմմտ. *զալ ի միտս, ի խելս, ի*

գիտութիւն եւն ոճերը, յատկապէս՝ անձին զգալ: Զգալ աշխ. ինձգիւնքին գալ, խելքի գալ: Զգալ բային հին կատարեալն էր [գամ բայի եկի կատարեալից] որից կազմուած են՝ զեկուցանել *“չուր տալ, իմացնել, պատմել”*.

Հաւատացեալներ սպասած են ու պիտի՝ սպասեն որքան հարկ ըլլայ, որովհետեւ Անոր Գալուստը ոչ միայն *կ’նպաստ’նէ՛*, այլ նաեւ *կ’զգանէ՛*: Հոգեկան ներթափանցումի և ներահայեցողութեան վիճակ մը կայ որ դժուար է բացատրել փաստարկութեամբ: Իմանալի է միայն հոգեկան և աննիւթական վեհ, եթերային փորձառութեամբ: Որովհետեւ կան իրողութիւններ որոնք աւելի խորապէս կարելի է երեւակայել, քան բացատրել, և այդ զգացումները աւելի գոյ են որպէս ճշմարտութիւններ քան թէ կրնանք երեւակայել զանոնք: Հետազօտող գիտնական Տր. Քիւրիները յամաւորէն և յարատեւօրէն հետապնդեցին իրենց նախագգացումները գտնելու համար ցարդ անծանօթ տարրը: Թէեւ կարգ մը գիտնականներու համար երեւակայական ու ցնորածին հետազօտութիւն կը նկատուէր անոնց աշխատանքը, սակայն անոնք ի վերջոյ իրականացուցին իրենց զգացածն ու հաւատացածը:

Վարդան Մամիկոնեան և Հայ հաւատացեալները, թէեւ կրուեցան անհաւասար ուժերու դէմ, որ դիւանագիտականօրէն կրնայ սխալ սեպուիլ, սակայն անոնք արդարացուցին իրենց արարքն ու պայքարը: Իրենք մեռան, սակայն չկորան: Իրենք պարտուեցան, սակայն չկորսնցուցին իրենց հաւատքը, այլ առաւել ըլլալով կարողացան փոխանձել իրենց աննահանջ և անպարտելի հաւատքը յետագայ դարերու ճակատագրին: Անոնց աներեր հաւատքով՝ Արարատեան Արմէնները շարունակեցին պահել Հայ Տեղը հաւատացեալ և զարդարել Հայաստանը իր Եկեղեցիներով և դպրեվանքերով:

Յիսուս Քրիստոսի վերադարձը՝ Անոր “Գալուցն” է: «Նովին Մարմնով»ը ուշացած կրնայ ըլլալ: Սակայն ուշացած է անոնց համար, որոնց ժամանակը Արեւադարձային դրութեամբ կը գործէ: Հաւատացեալին ժամանակը *հաւատ-
քն’ս* և Աստուծոյ խօսքին վստահելո՛ւմ կը գործէ: Արարիչ Աստուծոյ հայ-
եացում մէկ օրը նման է հազար տարիի և հազար տարին մէկ րոպէի: Հաւ-
տացեալ Հայ նախնիները աներկիւղ և անվարան հաւատացին երկնառաք
դեսպաններուն աւետիսին որ մարտահրաւերի մը չափ ուժ ունեցաւ Առաքեալ-
ներու կեանքին մէջ: Առաքեալները իմացան հրեշտակներուն ըսածները.

«Մ’մ Գալիլեացիներ, ինչո՞ն կեցած դէպի երկինք կը նայիք. այս Յիսուսը, որ ձեզ մէջէն երկինք համբարձաւ, պիտի գայ նոյն ձեռով, ինչպէս որ տեսաք անոր երկինք երթալը»--Առաք. Ա.11:

Ես կը միանամ այն անհամար Հայ ցեղակից հաւատացեալներուս, և կը ձայնակցիմ անոնց ցնծերգին, քաջալերելու համար տկարահաւատներն ու նորահաւատները, բացազանչելով աշխարհի

“Գալուց է Ան Նովին Մարմնով”:

Փետրուար 27, 1990

ՄԱՐԴԵՂԱՅԵԱԼ ՅԻՍՈՒՍ ԵՒ ՅԱՂԹԱԿԱՆ ՔՐԻՍՏՈՍ, ՄԻԱԾԻՆՆ ՅԻՍՈՒՍ

Աստուածային շինարար ստեղծագործութիւնը իրագործուեցաւ Արարիչ Աստուծոյ **ԽՕՍԲՈՎ**-ը, որ է՝ մեր Տէր Յիսուս Զրիստոս "Բան Աստուծոյն":

Աստուած ոչ միայն գոյութիւն ունեցող էակ մըն է համայն տիեզերքին մէջ, այլ Ի՛նքն է տիեզերք Գոյացութիւնը: Արարիչ Աստուած ոչ կը չափուի և ոչ կը կշռուի: Ան՝ մեր մտածողական ըմբռնումին իմանալի կը դառնայ մի միայն Իր Միածնին՝ Յիսուսի Մարդեղութեամբ: Սոյն պատճառաւ, Մարդեղացեալ Աստուածայայտնութիւնը ըսաւ.

*«Որէնքն ու մարգարէները մինչեւ Յովհաննէ՛ս
գոյութիւն ունէին, անկէ յետոյ կը Բարոգուի
Աստուծոյ արժայութիւնը»--Ղուկ. ԺԶ.16:*

Ուստի Արարիչ Աստուած, համայն տիեզերքին մէջ ըլլալով, Իր Խօսքն ու Մտածումները շողարձակուած են նաեւ համայն միջոցին ու ժամանակին մէջ: Մարդ արարածին կը մնայ վերոյիջեալ Աստուծոյ խօսքերն ու մտածումները լսել և իմանալ Անոր հեղինակաւոր Մարդեղացեալ Որդիէն՝ Յիսուս Զրիստոսէ:

Աստուծոյ թէ բուսական և թէ կենդանական արարչագործութիւնը կը սկսի հունտէ մը և կը բողբոջի աճիլ մինչեւ հասնիլը իր ամբողջական հաստ-դութեան և գագաթնակէտին-- *կատարելութեան:*

Բոլոր արարչական կենդանի էակներուն մէջ, միայն մարդ արարածը, իր աստուածամանութեան պատճառաւ, անբոյժ չէ իր գոյութեան, այլ կը տենչայ ճանչնալ և գիտնալ իր Արարչին կամբը, իր հասողութեան կատարը և իր գոյութենականութեան իմաստը: Մարդ արարածին պարտականութիւնը գործել էր երկիրը որպէսզի կարենայ շարունակել ապրիլ: Իսկ նախա-պատմական դարերէ սկսեալ, ան կը ճգնի գտնել իր *գոյութենականութեան* գոյապատճառը:

Աստուած չէ լքած Իր կերտած բարձրագոյն մարդ արարածը: Ան շարունակ կը ջանայ յայտնել Իր սիրած մարդ էակին, Իր երկնային յատկանիշները, այս հոգեկան իրականութիւնները որոնք մարդ էակը պիտի առաջ-նորդեն հողեղէնէ դէպի հոգեղէնի և ժամանակաւորէն դէպի յաւերժական կեանքին: Մարդ արարած թէեւ կը ձգտի հասնիլ իր Արարչին, սակայն անոր հողողէն միտումները զինք կառաջնորդեն ժամանակաւոր փառամոլութեան և "ես"-ական կուրուութեան, որուն պատճառաւ, մարդ կը շեղի իր ճամբէն ու կը

կորսնցնէ իր կոչումը, դիտաւորութիւնը և հեռանկարը:

Երբ փոթորկայոյց աշխարհը կը տատանէր անձնասէր բունատէրերու և անխիղճ իշխաններու միջեւ, Գաբրիէլ հրեշտակը Աստուծմէ որկուեցաւ Գալիլեայի մէկ քաղաքը, որուն անունը Նազարէթ էր, կոյսի մը, որ նշանուած էր Յովսէփ անունով մարդու մը հետ: Այս կոյսին անունը Մարիամ էր: Հրեշտակը մօտենալով անոր՝ ըսաւ. *«Այի՛ վախճար, Մարիամ՛, որովհետեւ Աստուծմէ ջնորհ գտար: Եւ անա դու ն պիտի յղանաս և որդի մը պիտի ծննիս ու անոր անունը Յիսուս պիտի դնես: Ան մեծ պիտի ըլլայ և Քարձրեալի Արդի պիտի կոչուի»:* Հրեշտակը շարունակեց և ըսաւ. *«Մտքը Հոգին պիտի գայ բու վրայ, և Քարձրեալին զօրութիւնը հովանի պիտի ըլլայ Քեզի, որովհետեւ ան որ Քեզմէ պիտի ծնի՝ սուք է և Աստուծոյ Արդի պիտի կոչուի»*--**Ղուկ Ա30-35:**

Աստուած Իր ստեղծած և սիրած մարդ էակը ա՛յնքան սիրեց, որ Իր Արդին՝ Միածինը՝ որկեց աշխարհ, որպէսզի մարդ արարած ի վերջոյ ուղիղ ճանչնայ Իր Արարիչը: Աստուած որկած էր բազմաթիւ մարգարէներ, տեսանողներ և հրաջքներ գործող ծառաներ, սակայն անոնք չկրցան ցոյց տալ Աստուած ճշմարիտը, մոլորած և ալլատեցած մարդկութեան: Որովհետեւ Հին Կտակարանի ազգայնամո՛ղ մարգարէները, իրե՛նք եւս ներկայացուցին "վրէժխնդիր և նախանձուտ" Աստուած մը, պատժո՛ղ Արարիչ մը: Մարդոցմէ հեռացած և անկարեկի՛ր Աստուած մը, որ կը պահանջէր արջառներու և նոյնիսկ մարդկայի՛ն գոհագործութիւն:

Վերոյիջեալ մարգարէներուն մէջ, բացառութիւն կը գտնէ Եսայի մարգարէն: Ան, Մովսէսէն 800 հարիւր տարիներ վերջ կը գրէ իր ժողովուրդին ու կը յայտնաբանէ զԱստուած, ըսելով.

«Ես ասոր պիտի նայիմ», Այսինքն *խոնարհին և կոտորած* հոգի ունեցողին ու իմ խօսքէս դողացողին:

Արջառ մորթողը մարդ մեռցնողի պէս է,

Գառնուկ զոհողը շուն մորթողի պէս,

Նուէր մատուցանողը խոզի արիւն մատուցանողի պէս,

Կնդրուկ ծխողը կուռք պաշտողի՝ պէս,

Իրաւընէ անոնք իրենց ճամբաները ընտրեցին,

Ու անոնց հոգիները իրենց գարջելիներէն կ'ախորժին:

--**Եսայի ԿԶ.2-3:**

Հետեւաբար, մարդկային փորձութեան և շփոթութեան մէջ, մարգարէներն ու տեսանողներն իսկ, երբեմն ուղիղ և երբեմն սխալ (ոչ սուտ) անկարող եղան մարգարէանալ ու աստուածային յայտնութիւնը և կամքը լման բացատրել և հասկցնել իրենց ելբայր հաւատացեալներուն և իմաստասէրներուն:

Յիսուսի երկինք Համբարձման օրն իսկ, երբ Յիսուս Իր աջակերտներով լերան մը վրայ բարձրացաւ ու պատգամեց անոնց տեղի ունենալիք դէպքերը՝ *Աստուծոյ Թագաւորութիւնը*, Իր *Էրկրորդ Գալուստ* և *Մտնելոց Յարութիւնը*:

Աշակերտները, նախապաշարուած իրենց ազգայնամոլութենէն, հարցուցին Յիսուս Կարդապետին և ըսին.

«Տէ՛ր, այս ժամանակի՞ս մէջ պիտի վերահաստատես Իսրայէլի՞ թագաւորութիւնը»--Գործք Ա.6:

Յիսուս Կարդապետ, որ երեք տարի քարոզած էր Աստուծո՛յ թագաւորութիւնը և ո՛չ Իսրայէլի զգուշացուց և սաստեց զանոնք, ըսելով.

«Ձեզի տրուած չէ գիտնալ այն ժամերը և ժամանակները զոր Հայրը հաստատեց Իր իշխանութեան մէջ: Այլ երբ Սուրբ Հոգին իջնէ ձեր վրայ՝ զօրութիւն պիտի տոնէք և վկաներ պիտի ըլլաք Ինծի համար երուսաղէմի մէջ և երկրի ծայրերը»--Գործք Ա.7-8:

Յիսուս Զրիստոս երեք երկար տարիներ դաստիարակած ու յայտնաբանած էր Աստուծոյ թագաւորութիւնը Զինք սիրո՞ղ աշակերտներուն: Սակայն առանց Սուրբ Հոգւոյն օժանդակութեան, մարդ արարած որքա՛ն ալ նայի և կարդայ Աստուծոյ Խօսքը չի կրնար հասկնալ և տեսնել իրողութիւններն ու եղելութիւնները: Ա՛յս իսկ պատճառաւ, ներկայ եկեղեցիները չեն կրցած ճանչնալ Աստուծոյ թագաւորութիւնը և իւրաքանչիւր եկեղեցի կը դաստիարակէ ի՛ր ժողովուրդը ի՛ր եկեղեցւոյ վարդապետութեամբ:

Մենք Հայերս, որ հպարտ ենք Աւետարանին Հայերէն թարգմանութեամբ: Մեր մէջ քանի՞ հաւատացեալներ, լրջօրէն, կը սերտեն իրենց ժառանգ ձգուած Յիսուսի Աւետարանը:

Այսպիսի լուրջ պատճառաւ մեր եկեղեցական հովիւները չեն դաստիարակեր հաւատացեալները, Յիսուսի երկրորդ Գալուստին նկատմամբ: Յիսուս չսաստեց աշակերտները Իր երկրորդ Գալուստի և Մեռելոց Յարութեան նկատմամբ, այլ՝ իրենց նախապաշարմա՛ն համար, որ տակաւին ջփոթ և պղտոր էին Աստուծո՛յ և Իսրայէլի թագաւորութեան մասին: Յիսուս չմարդացաւ միայն Իսրայէլ ազգին համար, այլ համա՛յն մարդկութեան, ինչպէս Յովհաննէս Առա՛մեալ կ'ըսէ.

«Քանի որ Աստուած այնպէս սիրեց աշխարհը»:

Աւետարանը չըսէր *“այնպէս սիրեց Իսրայէլը”*, այլ՝ Ան կ'ըսէ **“աշխարհը”** -- Յով. Գ.16:

Սոյն պատճառաւ, մեզի սիրող Հայր երկնաւորը առաւել ըլլալով դրկեց

Սոյն պատճառաւ, մեզի սիրող Հայր Երկնաւորը առաւել ըլլալով դրկեց հրեշտակներ, որոնք շիտակ և ճշգրիտ կերպով բացատրեցին մարդկութեան Աստուծոյ Կամքը և Միտքը:

Նոյնիսկ այսօր, Յիսուսի սրբարար Խաչելութենէ քսան դարեր յետոյ, քանի՞ կղերականներ ու եկեղեցականներ կը ներկայացնեն զԱստուած ուղիղ և մարդասէր իրենց **կենցաղով և ապրելակերպով**: Այսօր, աշխարհ կ'ուզէ տեսնել Յիսուս Բրիստոսը Իր ծառաներուն իրակա՛ն և ամէնօրեայ *վարմունքին մէջ*, ո՛չ թէ միայն Պատարագի դերակատարութեան մէջ: Իսկական կենցաղավարութիւնը ենթական կը տանի մինչեւ Գողգոթա և նահատակութիւն ու ո՛չ հարստութիւն կամ ծափահարութիւն:

Եսայի մարգարէն, որ նաեւ կոչուած է Հին Կտակարանի "Աւետարանիչ", կ'ըսէ.

**«Վասնզի մեզի Մանուկ մը ծնաւ,
Մեզի որդի մը տրուեցաւ,
Եւ իշխանութիւնը Անոր ուսին վրայ պիտի ըլլայ,
Ու Անոր անունը պիտի կոչուի
Մհանչելի, Խորհրդակից, Հզօր Աստուած,
Յաւիտենականութեան Հայր, Խաղաղութեան Իշխան»:**
--Եսայի Թ.6:

Հրեշտակային և մարգարէական ծանուցումները և յայտարարութիւնները գործարդուեցան երբ մեր Տէրը Յիսուս *Բրիստոս մարդացաւ* ու եկաւ աշխարհ փնտրելու և փրկելու կորսուած և այլատրած մարդկութիւնը: Յիսուս Բրիստոս կատարելէ յետոյ Իր Հօր Աստուծոյ պատուէրները Անոր Կամքին համաձայն, ու դանդաղօրէն կը բաժնուէր ու կը բարձրանար երկինք, աշակերտները ապշահար եղած կը դիտէին Յիսուսի բաժանումը իրենց աչքէն մինչեւ աներեւութանալը: Ահա անոնց երեւցան ճերմակ զգեստներով երկու մարդիք, որոնք և ըսին.

**«Մ՛՛՛՛՛ Գալիլեացիներ, ինչո՞ւ կեցած դէպի երկինք
կը նայիք. այս Յիսուսը, որ ձեր մէջէն երկինք
համբարձաւ, պիտի գայ նոյն ձեռով, ինչպէս որ
տեսաք Անոր երկինք երթալը»--Գործք Ա.11:**

Վերոյիշեալ *ճերմակ զգեստաւոր* երկնաքեր պատգամաւորները հասան ճիշտ հարկ եղած ժամուն, աւետելու և քաջալերելու շփոթած աշակերտները և Յիսուսը սիրողները, որպէսզի չվհասին և չկորսնցնեն իրենց տեսիլքն ու կոչումը: Աստուած Իր կանչած ծառաներն ու վկաները երբեք չլքեր: Ինչո՞ւ, որովհետեւ Աստուած **Մէ՛Ր** է և մեզ, Իր հոգւոյն ամբողջութեամբը կը սիրէ: Բոլոր անոնք, որոնք կրցած են ճանչնալ Անոր սէրը իրենց հոգւոյն մէջ, դարձած են անվեհեր քարոզիչներ ու վկաներ իրենց Տիրոջը:

Հրեշտակներուն աւետումը Յիսուս Բրիստոսի երկրորդ Գալուստը ոչ թէ

նորութիւն մըն է աշակերտներուն, այլ՝ յիշեցումն էր այն բոլոր խոստումներուն որոնք Յիսուս սկիզբէն ըրած էր Իր սիրած աշակերտներուն, սակայն անոնք չէին հասկցած: Ինչո՞ւ, որովհետեւ Հին Կտակարանի մէջ Յիսուսի Երկրորդ Գալուստը, մարգարէներն իրենք եւս բացայայտէն չէին հասկցած:

Նոյնիսկ այսօր, Յիսուս Զրիստոսի յստակ խոստումները Իր Երկրորդ Գալստեան, քանի՞ եկեղեցիներ կը քարոզեն յորդորելով հաւատացեալները որպէսզի շարունակեն կրել իրենց խաչը, մինչեւ որ լսելի ըլլայ Աստուծոյ Փողը ու երեսայ Յաղթական Յիսուս Իր Հօր հրեշտակներով և փառքով:

Որովհետեւ Յիսուս Ի՞նք, Ղազարոսի գերեզմանին, ըսաւ Մարթային.

1. «Ըու եղբայրդ յարութիւն պիտի առնէ»--Յով. ԺԱ.22:
2. «Ես իսկ եմ Յարութիւն և Կեանք. ով որ կը հաւատայ Ինձի, թէպէտ մեռնի ալ, պիտի ապրի. իսկ ով որ կենդանի է և կը հաւատայ Ինձի՝ յաւիտեան պիտի չմեռնի» ըսաւ Յիսուս--Յով. ԺԱ.25:
3. «Չըսի՞ք Բեզի, որ եթէ հաւատաս՝ Աստուծոյ փառքը պիտի տեսնես»--ժԱ.40:
4. «Ճշմարիտ, ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, որ պիտի գայ ժամանակ, և արդէն իսկ եկած է, երբ մեռելները պիտի լսեն Աստուծոյ Որդիին ձայնը, և անոնք որ պիտի լսեն՝ պիտի ապրին... Պիտի լսեն Անոր ձայնը և դուրս պիտի ելլեն. անոնք որ բարի գործեր ըրած են՝ կեանքի յարութեան համար, իսկ անոնք որ չար գործեր ըրած են՝ դատաստանի յարութեան համար»--Յով. Ե.25-29:
5. «Ձեզ որք պիտի չթողում, պիտի գամ ձեզի: Կարճ ատեն մը ես, և այս աշխարհը պիտի չտեսնէ զիս. բայց դուք պիտի տեսնէք Ձիս, որովհետեւ ես կենդանի եմ, և դուք ալ կենդանի պիտի ըլլաք»--Յով. ԺԳ.18-19:
6. «Եթէ միայն այս կեանքին համար յոյս դրած ենք Զրիստոսի վրայ՝ ողորմելի ենք քան բոլոր մարդիկ»--Ա Կորնթ. ԺԵ.19:
7. «Բայց արդ, մեռելներէն յարութիւն առած է Զրիստոս՝ ննջեցեալներու առաջին պտուղը. Զանի որ մէկ մարդով մահ եղաւ, մէկ մարդով ալ՝ մեռելներու յարութիւն: Ինչպէս որ Ադամով ամէնքը կը մեռնին, այնպէս ալ Զրիստոսով ամէնքը պիտի կենդանանան՝ իւրաքանչիւրը *իր կարգին* նախ Զրիստոս և ապա Զրիստոսին պատկանողները՝ Իր գալստեան ատեն. և ապա պիտի գայ վախճանը, երբ որ Ան տայ թագաւորութիւնը Աստուծոյ և Հօր Ձեռքը, երբ որ կործանած ըլլայ բոլոր իշխանութիւնները և ամէն պետութիւն ու զօրութիւն. որովհետեւ Ան (Յիսուս) պէտք է թագաւորէ մինչեւ որ բոլոր թշնամիները դնէ Իր ոտներուն տակ: Վերջին թշնամին որ պիտի կործանի՝ մահն է. և Աստուած ամէն ինչ հնազանդեցուց՝ դնելով Անոր ոտներուն տակ: Բայց երբ կ'ըսէ թէ՛ ամէն քան Անոր հնազանդած է, յայտնի է թէ՛ բացի Անկէ՛ (Աստուծմէ) որ ամէն քան հնազանդեցուց Անոր: Իսկ երբ ամէն քան հնազանդի Անոր՝ այն ատեն ինք՝ Որդին ալ պիտի հնազանդի Անոր (Աստուծոյ), որ ամէն քան հնազանդեցուց Անոր, որպէսզի Աստուած ամէն քան ըլլայ ամէնքին մէջ»--Ա Կորնթ. ԺԵ.20-28:
8. «Վասնզի Դաւիթ երկինք չեղաւ, բայց ինք կ'ըսէ, Տէրը իմ Տէրոջս ըսաւ.

"նստէ իմ աջ կողմս"--Գործք--2.34:

8. «Ոչ ոք երկինք ելած է բացի միայն անկէ, որ երկինքէն իջաւ»--Յով. 4.13:
Ճերմակ զգեստներով, աշակերտներուն երեւցող հրեշտակները, ինչո՞ւ ըսին.

**«Այս Յիսուսը, որ ձեր մէջէն երկինք համբարձաւ,
պիտի գայ նոյն ձեռով, ինչպէս որ տեսաք Անոր
երկինք երթալը»--Գործք Ա.11:**

Ի՞նչ կը նշանակէ **«պիտի գայ նոյն ձեռով»** հրեշտակներուն արտա-
յայտած խօսքը: Ներկայ Զրիստոնեայ հաւատացեալներու մտքին մէջ,
Բանդակուած սխալ կարծիքը ա՛յն է, թէ հաւատացեալ մը երբ մեռնի, անոր
հոգին ուղղակի երկինք կերթայ Աստուծոյ բով: Մինչդէռ այդպիսի հաւատք
մը Յիսուս մեզի չէ՛ սորվեցուցած: Յիսուս Իր յաղթական Յարութիւնէն
յետոյ երբ առաջին անգամ երեւցաւ Մարիամ Մագդաղենացիին, ան ուզեց
փաթթուիլ Յիսուսի Ոսկերուն որ համբուրէ Ձայն: Յիսուսի պատասխանը
եղաւ.

**«Աի՛ մօտենար Ինծի, Բանի որ դեռ չեմ
ելած դէպի Իմ Հայրս»--Յով. Ի.17:**

Յարուցեալ Յիսուսի վերոյիջեալ խօսքերը չեմ ուզեր բացատրել ուրիշ-
ներու: Ամէն հաւատացեալ թող ի՛նք հարցնէ Տէր Յիսուս Զրիստոսի:

Աշակերտները երբ խնդրեցին իրենց Վարդապետէն որ աղօթել սոր-
վեցնէ իրենց, Ան սորվեցուց ճշմարիտ աղօթելու եղանակը: Յիսուսի
սորվեցուցած աղօթքին մէջ, կայ նախադասութիւն մը, որ վրիպած է շատերու
աչքերէն ու արտասանութիւնէն, ուր աղօթող ենթական կ'ըսէ.

**«Եկեսցէ արժայութիւն քո, եղիցին կամք քո
որպէս յերկինս՝ և յերկրի»--Մատթ. 2.10»**

Հարցում մը: Աղօթող ենթական, վերոյիջեալ բառերը աղօթած ատեն,
ի՞նք **երկի՛նք երթալ** կը փափաքի, թէ **երկնային արժայութեան** գալը կը
խնդրէ Հա՛յր Աստուծմէ: Յետագայ գրութիւնները կարդալէն առաջ ջատ պիտի
խնդրէի որ անկեղծ ընթերցողը, ի՛ր անձի՛ն հետ անկեղծ ըլլայ և յետոյ
շարունակէ կարդալ:

Համայն տիեզերքի բոլոր աստղերն ու մոլորակները երկնքի միջոցին
մէջ կը թաւալին ու կը շրջին: Մարդ արարած, աշխարհ մոլորակի վրայ,
երկնքի մէջն է: Նայինք թէ Եսայի մարգարէն ի՞նչ կ'ըսէ երկրի և երկնքի
մասին.

**«Երկինք Իմ արթոս է, և երկիր Իմ
ոտներու ս աթառաւանդանն է»--Եսայ. 42.1**

**«Տիեզերք ածած՝ է, և երկինքն է սուրբ սեղան.
Երկինքն անոր զմբէթն է և իր աստղերն անհամար,
Աղօս զարդեր մըթութեան»--Լամարթին:**

Երկինք՝ յարաբերական հասկացողութիւն է, որ կը նշանակէ մարդու կարողութենէ բարձր՝ վեր: Երկինք բառը երբեմն կը գործածուի նոյնիման Աստուած ըսելու տեղ: Անառակ որդիին խօսքը, **«մեղանչեցի երկինքին** դէմ ու բու առջեւդ և այլես արժանի չեմ բու որդիդ կոչուելու»-- **Ղուկ. ԺԵ.18** կը նշանակէ «Աստուծոյ դէմ»:

2. Յարաբերական իմաստով կը նշանակէ նաեւ տիեզերքի կանոնը որ կը հոգացուի Աստուծոյ հրամանաւ, և կը գտնուի Անոր Մտքին ու ծրագրին մէջ--**Կոր. Բ.8, 20**: Յիսուս կը պատուիրէ աշակերտներուն, ըսելով.

3. Երբ երթաք, բարոզեցէ՛ք ու ըսէ՛ք. **«Երկինքի արքայութիւնը** մօտեցած է»--**Մատթ. Ժ.7**:

4. «Ննդրեցէ՛ք նախ **Աստուծոյ Թագաւորութիւնը** և Իր արդարութիւնը, և այդ բոլորը աւելի՛ով պիտի տրուի ձեզի»--**Մատթ. 2.33**:

Արկէ՞ և ե՞րբ մուտք գործեց մարդկային "Հոգւոյ անմահութեան" գաղափարը եկեղեցիներուն մէջ: Պիւթակորոս եղաւ այն անձը որ եւրոպայ բերաւ հոգւոյ անմահութեան տեսութիւնը որ ի՛նք եւս ստացած էր Եգիպտացիներէն: Պղատոն կը կարծէր թէ *մարմինը մահկանացու է, իսկ հոգին անմահ*: Յոյն իմաստասէրներ, առաջին դարուն, կը հաւատային "հոգւոյ" անմահութեան, բայց մարմիններու յարութիւնը նոր գաղափար մըն էր իրենց համար: Նահատակութիւնը դարձաւ Քրիստոնեաներու կեանքի ճամբան հունաւորողը և անմահութիւն կերտելու գերմարդկային բաշխութիւնը: Յիսուս **անմահութիւն** չխոստացաւ Իրեն հաւատացողներուն, այլ՝ միայն **«Յաւիտենական կեանք»** ու մահուանէ յետոյ **«ՅԱՐՈՒԹԻՒՆ»**--**Յով. 3.15-16, 36**: Կարդանք թէ ի՞նչ կը գրէ Պօղոս առաքեալ "Աստուծոյ" որ կը հատուցանէ իւրաքանչիւրին իր գործերուն համեմատ. **յաւիտենական կեանք** անոնց՝ որ բարի գործերու մէջ համբերութեամբ յարատեւելով, կը փնտոեն փառք, պատիւ և **անմահութիւն»**--**Հռոմ. Բ.6-7**:

Ադամ *անմահ* ստեղծուած չէր: Սոյն պատճառաւ Աստուած զգուշացուց զայն, որ չուտէ արգիլուած պտուղէն: "Անմահ", կը նշանակէ որ անձ մը մահուան ենթակայ չի կրնար ըլլալ, չի կրնար մահանալ, նոյնիսկ եթէ ուզէ կամ անհնազանդ ըլլայ Աստուծոյ: Պօղոս առաքեալ **«անմահութիւն»** բառը կը վերագրէ մի միայն Հա՛յր Աստուծոյ, ըսելով.

«Երանելին և միակ Հօգօրը, Թագաւորներու Թագաւորը և տէրերու Տէրը. *Ան՝ որ միայն ի՛նք ու նի* **անմահութիւնը** և կը բնակի անմասջելի լոյսի մէջ՝ զոր մարդոցմէ ոչ ոք տեսած է և կարող է տես-

մառնելի լոյսի մէջ՝ զոր մարդոցմէ ոչ ոք տեսած է և կարող է տեսնել. Անոր պատի՛ւ և զօրութի՛ւն յաւիտեանս: Ամէն»--Ա Տիմոթ. 2.16:

Յիսուս Քրիստոս՝ մարդեղացեալ Աստուածայայտնութիւն, մեռելները և վախճանեալները անուանեց-- **ննջեցեալ ներ:** Կարդանք Յովհաննու Աւետարան ԺԱ-րդ գլուխը:

«Յիսուս երբ լսեց թէ Ղազարոս հիւանդացած է՝ երկու օր եւս մնաց այնտեղ ուր կը գտնուէր: Անկէ ետք միայն ըսաւ աշակերտներուն. «Եկե՛ք դարձեալ չրէաստան երթանք»: Աշակերտները ըսին անոր. «Ռա՛բբի, չրեաները դեռ նոր կ'ուզէին ֆարկոծել քեզ, և նորէն այնտե՞ղ կ'երթաս»: Յիսուս պատասխանեց. «Օրը տասներկու ժամ չունի՞. եթէ մէկը ցերեկը կը ֆալէ՝ չի սայթաֆիր, որովհետեւ կը տեսնէ այս աշխարհի լոյսը. իսկ եթէ մէկը գիշերը կը ֆալէ՝ կը սայթաֆի, որովհետեւ հետը լոյս չկայ: Այս բաները ըսելէ յետոյ նորէն ըսաւ անոնց. «Մեր բարեկամը՝ Ղազարոս, **ննջեր** է, սակայն երթամ արթնցնեմ զայն: Աշակերտները ըսին անոր. Տէ՛ր, եթէ ննջեր է՝ ուրեմն կ'առողջանայ»: Բայց Յիսուս անոր մահուան կ'ակնարկէր, մինչդեռ անոնց այնպէս թուեցաւ թէ Ան ֆունով ննջելու մասին կ'ըսէր: Այն ատեն Յիսուս յայտնապէս ըսաւ անոնց. «Ղազարոս մեռաւ. եւ ես ուրախ եմ ձեզի համար, որ հոն չէի, որպէսզի դուք ինձի հաւատաք: ...Յիսուս եկաւ և չորս օրէ ի վեր գերեզմանի մէջ դրուած գտաւ զայն»--4-17:

Ի՞նչ կը նշանակէ "ննջեցեալ" կամ ֆնացած: Մարդիկ կը ֆնանան հանգչելու համար, որպէսզի յաջորդ արջալոյսին ելլեն և իրենց կէս թողած գործը լրացնեն: Արդեօք մեր մէջ կա՞ն անձեր, որոնք կը վախնան ֆնանալէ, որ կրնայ ըլլալ որ չարթնանան յաջորդող արջալոյսին: Նոյնն է նաեւ մահը կամ ննջելը հաւատացեալ Քրիստոնեայի մը համար:

Սակայն ինչո՞ւ համար քրիստոնեաներ կը կարծեն թէ իրենց սիրելի հանգուցեալին անմար հոգին երկինք գացած է: Իսկ եթէ երկի՛նք իսկ գացած ըլլայ, ինչո՞ւ կը սգան, կ'ողբան և կու լան: Եթէ կը հաւատան իրենց կարծեցեալ սխալ գաղափարին, պարտ են ուրախութիւն սարքել և զուարճանալ...:

Երկնածեմ Յիսուս՝ Իր ճշմարիտ և մարդացեալ հանգամանքով ըսաւ աստուածաբան Նիկողեմոսին.

«Արդ, ոչ ոք երկինք ելած է, բացի միայն ասկէ, որ երկինքէն իջաւ. Մարդու Որդին»--Յով. 4.13:

Պենտեկոստէի օրը, երբ բոլոր Յիսուսի հաւատացողները Սուրբ Հոգիով մկրտուեցան, Պետրոս ֆարոգեց իր անդրանիկ պատգամը, վկայելով Յիսուս

Քրիստոսի Մարմնական Յարութիւնը և ըսաւ իր Հրեայ ազգակիցներուն. «Այս Յիսուսին է որ *Աստուած յարութիւնն տուաւ*, որուն մենք ամենքս ալ վկայ ենք»:

Շարունակելով իր Բարոզութիւնը, Պետրոս ըսաւ. «Ո՛վ եղբայրներ, համարձակութեամբ կարելի է ըսել Դաւիթ Նահապետի մասին, որ թէ՛ մեռաւ, թէ՛ թաղուեցաւ, և անոր գերեզմանը մեր մէջ է մինչեւ այսօր: Արովհետեւ, ***Դաւիթ, որ երկինք ելած է***, ի՛նք իսկ կ'ըսէ. «Տերը ըսաւ իմ Տիրոջս. նստէ՛ իմ աջ կողմս, մինչեւ որ Բու թշնամիներդ ոտներուդ իբրեւ պատուանդան դնեմ»--**Գործք Բ.29, 34-35**:

Սակայն Դաւիթ իր սերունդին օրոք ծառայեց և Աստուծոյ կամֆով վախճանեցաւ ու աւելցաւ իր հայրերուն վրայ՝ ապականութիւն տեսնելով (հող դառնալով): Բայց Ան (Յիսուսի), որուն Աստուած յարութիւն տուաւ, ապականութիւն չտեսաւ--**Գործք ԺԳ.36-37**:

Ուստի, ըստ Յիսուս Քրիստոսի Աւետարանին, առաքեալները Բարոզեցին և սորվեցուցին համայն աշխարհի, թէ պիտի գայ ժամանակ մը երբ բոլոր գերեզմաններու մէջ ննջողները Աստուած պիտի յարուցանէ: Պօղոս կ'ըսէ.

«Եղբայրներ՛ր, չեմ ուզեր որ անգէտ ըլլաք ննջեցեալներու մասին, որպէսզի չսխրիք ուրիշներու նման, որոնք յոյս չունին: Եթէ կը հաւատանք թէ Յիսուս մեռաւ և յարութիւն առաւ՝ այդպէս ալ Աստուած ետ պիտի բերէ ննջեցեալները Յիսուսի միջոցով, Անոր հետ: *Մենք այս քանը կ'ըսենք Տիրոջ խօսքով* . որ կենդանի ենք և սպասող Տիրոջ գալստեան, պիտի չհասնինք ննջեցեալներու վիճակին, որովհետեւ Տերը ինք, հրամանով հրեշտակապետին ձայնով և Աստուծոյ շեփոքով պիտի իջնէ երկինքէն, և ամենէն առաջ յարութիւն պիտի առնեն ի Քրիստոս մեռածները: Ապա մենք ալ, որ կենդանի մնացած պիտի ըլլանք, անոնց հետ միասին պիտի յափշտակուինք տարուինք ամպերու վրայէն Տիրոջ ընդառաջ, օդին մէջ, և այդպէս Տիրոջ հետ պիտի ըլլանք մշտապէս: Ուրեմն, միսիթարեցէ՛ք զիրար այս խօսքերով»--**Ա թեալ. Դ.12-17**:

Յիսուսի վկայութիւնը--

«Այդ օրերու նեղութենէն անմիջապէս յետոյ, արեգակը պիտի խաւարի, և լուսինը իր լոյսը չպիտի տայ, և աստղերը երկինքէն պիտի իջնան, ու երկնքի զօրութիւնները պիտի ջարժին: Եւ ապա երկնքի վրայ պիտի երևի մարդու հոյսիին նշանը. ու այն ատեն երկրի բոլոր ազգերը պիտի լան ու ողբան և պիտի տեսնեն Մարդու հոյսին, որ կը գայ երկնքի ամպերուն վրայէն՝ զօրութեամբ և մեծ փառքով: Եւ ան պիտի որկէ՛ Իր հրեշտակները մեծ ջեփոքով, ու երկնքի մէջ ծայրէն մինչեւ միւսը ծայրը» «...Բայց այդ օրուան ու ժամուան մասին ոչ ոք գիտէ, ո՛չ երկնքի հրեշտակները և ո՛չ ալ հոյսին, այլ միայն Հայրը

--Մատթ. ԻԳ.29-31, 36:

Պօղոս առաքեալ թեսաղոնիկեցիներու գրած առաջին նամակէն յետոյ կը գրէ երկրորդ նամակ մը եւս ու կը բացատրէ աւելի մանրամասնօրէն.

1. «Երբ Տէր Յիսուս յայտնուի երկինքէն Իր գօրութեան հրեշտակներով, կրակի բոցով»--Ա.7:
2. «Անոնց պատիժը պիտի ըլլայ յաւիտենական կործանումը, հետու Տէրոջը տեսութենէն և Անոր փառքէն»--Ա. Թես. Ա.9:
3. «Այն օրը պիտի չգայ, եթէ նախ չգայ ապստամբութիւնը, և չյայտնուի անօրէնութեան մարդը»--Բ. Թես. Բ.3-4:
4. «Չարին գալուստը Սատանային ներգործութեամբ է՝ ամենայն գօրաւոր գործերով և անիրաւութեան բոլոր պատրանքներով»--Բ.Թես. Բ.9:

Ս. Երանոս եպիսկոպոս (115-200) և Յուստինոս իմաստասէրը (100-165) թուականին, և բոլոր սուրբերը կը հաւատային թէ Յիսուս *երկրի՛ վրայ* պիտի հաստատէ Իր թագաւորութիւնը: Յիսուս զգուշացուց Իր Եկեղեցին, ըսելով թէ Իր գալէն առաջ Եկեղեցին պիտի այլասերի իր մէջի սուտ և կեղծաւոր առաջնորդներուն պատճառաւ.

1. «Այն ատեն ձեզ ներդութեան պիտի մատնեն ու սպանեն և բոլոր ազգերը պիտի ատեն ձեզ Իմ պատճառով: Այն ատեն շատեր իրենց հաւատքը պիտի կորսնցնեն, զիրար պիտի մատնեն և զիրար պիտի ատեն: Յետոյ բազմաթիւ սուտ մարգարէներ պիտի ելլեն ու շատերը մոլորեցնեն: Անօրէնութեան բազմանալուն պատճառով շատերուն սէրը պիտի ցամփի: Բայց ով որ մինչեւ վերջը դիմանայ՝ անկեղ պիտի փրկուի»-- **Մատթ. ԻԳ.9-13:** Այս բոլորը տակաւին ցաւերուն սկիզբն են:
2. «Որովհետեւ այնպիսի՛ մեծ ներդութեան օրեր պիտի գան, որոնց նմանը աշխարհի ստեղծագործութեան սկիզբէն մինչեւ այսօր չէ պատահած և ոչ ալ պիտի պատահի»--**ԻԳ.21-22:**
3. «Որովհետեւ այդ օրերը աստուածային դատաստանի և պատիժի օրեր են, որպէսզի իրականանան բոլոր գիրքերուն մէջ գրուածները:--Երկիր մեծ տազնապի պիտի մատնուի և Աստուծոյ բարկութիւնը այս ժողովուրդին վրայ պիտի գայ»--**Ղուկ. ԻԱ.22.23:**
4. «Արեւուն, լուսինին և աստղերուն հետ կապ ունեցող նշաններ պիտի պատահին: Աշխարհի բոլոր ժողովուրդները տազնապի և շփոթութեան պիտի մատնուին անեղ ձայներէն, որոնք կարծես ծովու ալեկոծումի գոչումը ըլլան: Աշխարհի վրայ պատահելիքներու ակնկալութենէն մարդիկ սարսափահար պիտի նուաղին, որովհետեւ երկնային մարմինները պիտի սասանին: Այն ատեն պիտի տեսնեն Մարդու Որդին, որ կու գայ ամպերուն վրայ՝ զօրութեամբ և մեծ փառքով»--**Ղուկ. ԻԱ.25-27:**
5. Գալով ձեզի, ուշադիր եղե՛ք ձեր անձերուն: Չըլլայ որ ձեր սիրտերը

գրաւուին *կերուխումով, արբեցութեամբ և աշխարհիկ հոգերով*, և յանկարծ այդ օրը ձեր վրայ գայ: *Որովհետեւ այդ օրը պիտի գայ ծուղակի պէս՝ բոլոր մարդոց, որոնք ամբողջ աշխարհի վրայ կ'ապրին*»--Ղուկ. ԻԱ.34-35:

Եկեղեցին՝ Բրիստոսի փառաւորումին ու Անոր Երկրորդ Գալստեան միջեւ գտնուող իրականութիւնն է: Բրիստոսի Երկրորդ Գալուստի շրջանին ու Բարիի ու չարին պայքարամարտի ընթացքին, բոլոր նախատարերային (prim-ordial) ակերածութիւնները՝ երկրաշարժ ու ցամաքափոփոխութիւններ պիտի կրկնուին, որպէսզի "Նոր Երկիր"ը վերադառնայ իր մաքուր նախա-վիճակին:

Յիսուս Բրիստոսի յայտնութիւնները և զգուշացումները.--

1. «Զգո՛յջ եղէք, չըլլայ որ մէկը ձեզ խաբէ և (մոլորեցնէ). որովհետեւ շատեր պիտի գան Իմ անունովս (զօրութեամբ) ու պիտի ըսեն թէ՛ ես եմ Բրիստոսը. և պիտի մոլորեցնեն շատերը:
2. «Անօրէնութեան բազմանալուն պատճառով շատերուն սերը (ոչ թէ հաւատ-բը) պիտի ցամփի»--**Մատթ. ԻԴ.13:**
3. «Եւ Ան պիտի դրկէ Իր հրեշտակները մեծ շեփորով, ու պիտի հաւաքեն իր ընտրեալները (տիեզերքի) չորս կողմերէն՝ երկնքի մէկ ծայրէն մինչեւ միւս ծայրը»--**Մատթ. ԻԴ.31:**
4. «Եւ այն ատեն պիտի տեսնեն մարդու Որդին՝ եկած ամպերու վրայ, զօրութեամբ և մեծ փառքով»--**Ղուկ. ԻԱ.27: Դան. Է.13-14:**

Բրիստոս Տէրն ու Գլուխն է Եկեղեցիին: Բրիստոսի թագաւորութիւնը, *որպէս խորհուրդ*, ներկայ է երկրի վրայ, որ է Իր Եկեղեցին: Պանդուխտ Եկեղեցին սուրբ է, բայց ոչ կատարեալ: Բրիստոսի երկրորդ Գալստէն առաջ Եկեղեցին մեծ նեղութենէ և դերահաւատութենէ պիտի անցնի: «Երբ գայ Մարդու Որդին՝ արդեօք հաւատք պիտի գտնէ՞ երկրի վրայ»-- **Ղուկ. ԺԸ.8, ԻԱ.12:**

«Ժամանակ պիտի գայ, երբ մարդիկ ականջ պիտի չկախեն առողջ վարդապետութեան, այլ՝ իրենց սեփական ցանկութիւններուն համեմատ պատասխանող և զիրենք հաճոյացնող բաներու մասին խօսող ուսուցիչներ (ֆարոգիչներ) պիտի փնտռեն: Պիտի չուզեն ճշմարտութիւնը լսել, և առասպելներու (աւանդութիւններու) ականջ տալով պիտի կորսուին»--**Բ. Տիմ. Դ.3-4:** «Վերջին օրերուն դժուար ժամանակներ պիտի գան, որովհետեւ մարդիկ պիտի դառնան *անձ նասէր, դրամապաշտ, ամբարտաւան, հպարտ, հայհոյիչ, ծնող ներու նանհազանդ, ասքերախտ, սրբութիւնները ռանա-կոխող, տմարդի, անգութ, չարախօս, անհանդուրժող, դա-ժան, բարիին թշնամի, մասնիչ, անպատկառ, գողոգ, և*

աւելի հեշտանձը սիրող՝ քան զԱստուած»:

Երեւութապէս աստուածապաշտ են անոնք, բայց խորքին մէջ չեն հաւատար աստուածապաշտութեան գօրութեան: «Եւ երբ մեր այս եղծանելի բնութիւնը անեղծ բնութեան փոխուի, և այս մահկանացու բնութիւնը անմահ բնութեան փոխակերպուի, այն ատեն պիտի իրականանայ գրուած մարգարեութիւնը, որ կ'ըսէ.

«Ո՞ւր է, Մա՛հ, յողթանակդ.

Ո՞ւր է, Մա՛հ, բու խայթոցդ»:

--Ա. Կորն. ժե.51-54:

Մայիս 10, 2003

Թորոնթօ

ՉԵՍ ՈՒՋԷՐ ԳԻՏՆԱԼ ՈՒՐԻՇ ԲԱՆ ՄԻԱՅՆ ԽԱՉԵՑԵԱԼ ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԸ

--Ա Կորն. Բ.2:

Ինչո՞ւ Պօղոս առաքեալ չուզեր գիտնալ ուրիշ բան, այլ միայն Յիսուս Քրիստոսի տառապանքն ու սրբարար խաչելութիւնը Կորնթոսի հաւատացեալներուն մէջ: Պօղոս առաքեալի Կորնթացիներու ըսած վճռական խօսքերուն բանալին կը գտնուի, նոյն գլխուն 5-րդ համարին մէջ, ուր ան համեստօրէն կ'ըսէ.

*«Որպէսզի ձեր հաւատքը չըլլայ մարդոց
իմաստութեամբ, այլ՝ Աստուծոյ զօրութեամբ»:*

Պօղոս առաքեալ "իմաստութիւն" և "գիտութիւն" ճանչցուած բառերը չուրանար, այլ առաքեալին խօսքերը կ'ակնարկեն "մարդկայի՛ն" իմաստութեան (Պղատոնի և Արիստոտելի): Որովհետեւ ինչպէս կան մարդկային տրամաբանութիւն և բանականութիւն, կա՛յ նաեւ երկնային **յայտնութիւն**: Անչափահասներու տրամաբանութիւնը, որ առաջնորդեց "Անառակ Որդին" դէպի թշուառութեան ոլորապտոյտը: Կա՛յ նաեւ չափահասներու՝ անոր հօ՛ր մտածումները, որոնք երկնայա՛յտ են, Աստուծոյ օժանդականութեամբ:

Ի՞նչ է մարդկային իմաստութիւնը: Մարդկային իմաստութիւնը կառաջնորդուի տրամաբանութեամբ, բանականութեամբ ու նաեւ, դժբախտաբար, նախապաշարումով և մարմնական մղումներով: Նախապաշարումը առանց բնութեան, ընդունուած և հեթանոս աւանդութիւններէ սերած պատրաստ կարծիքներ են, սփռուած համա՛յն մարդկութեան մէջ: Յիսուս Բաջ գիտնալով մարդոց հեթանոսական նախապաշարումը ըսաւ Ձինք մտիկ ընող բազմութեան.

*«Մարմնին ճրագը աչքն է. երբ աչքը առողջ է՝ անբողջ
մարմինը լուսաւոր կ'ըլլայ. իսկ երբ աչքը չար է՝ (նախա-
պաշարեալ), մարմինն ալ խաւար կ'ըլլայ»--Ղուկ. ԺԱ.34:*

Մարդ արարած, վերոյիջեալ երեք (տրամաբանութիւն, բանականութիւն և նախապաշարումին) վրայ, յաւելեալ ըլլալով, կրնայ ստանալ նաեւ **աստուածային յայտնութիւնը**: Աստուածային յայտնութիւն ունենալու համար, մարդ ապրած ըլլալու է Աստուածահաճոյ կեանք մը: Աստուածայայտնութիւնը, **ընտրովի՛** է: Այսինքն, այդ զօրութիւնը չնմանիր արեւի ճառագայթներուն որոնք կը տարածուին համայն աշխարհի վրայ, այլ վերոյիջեալ

յայտնութիւնը Աստուծմէ յաւելեալ նուէ՛ր մը, պարգեւ մըն է որ կը սրուի զԱստուած սիրողներուն և Անոր պատուիրանները անձնագոհաբար կատարողներուն: Մոյն պատճառաւ, առաքեալը կ'ըսէ.

«Ես միտքս չեմ դրած ձեր մէջ գիանալ ուրիշ բան՝ քան միայն Յիսուս Բրիստոսը և նոյն ինքն խաչուածը»:

Մարդ արարած կը խրաչի և կը խուսափի ցաւէ ու տառապանքէ: Յիսուսի միտքը ու Անոր ճշմարտութիւնները կը ճանչցուի՛ն մի միայն Յիսուսի սրբարար Խաչելութեամբ, ցաւի՛ և տառապանքի բանալիով: Ինչո՞ւ: Որովհետեւ, Ան իջնելով երկինքէն երկիր ցոյց տուաւ մարդոց, թէ Աստուած բրտութեամբ չգործեր, այլ սիրով: Սիրելու և սիրուելու միակ միջոցը, անկասօրէն *անձ նանուիրում և անձ նուրացութիւնն է:* Անառակ Որդիին առակին մէջ, հայրը իր ունեցած ստացուածքին կէսը տուաւ իր պզտիկ որդւոյն և անոր տունէն հեռանալու պահուն, փոխանակ, անիծելու զայն, արցունքահոս աչքերով հրաւիրեց զայն վերադառնալու իր հօրենական տունը:

Հայ ազգն ալ տառապեցաւ և բազմաթիւ անգամներ խաչուեցաւ: Մեր աշխարհական պատմաբաններն ու եկեղեցական կրօնաւորները ի՞նչպէս կը բացատրեն սոյն դէպքը ներկայ սերունդներուն: Մեր դաստիարակներն ու եկեղեցիները կը սորվեցնեն սիրե՞լ թէ ասել Թշնամին՝ Թուրքը: Թուրքը կրնայ ըլլալ անխիղճ, վայրագ ու զազանային: Իսկ մեր մտաւորականները կրթեցին մեզ ըսելով. ***«Մ՛ըր էր Աստուած Մեծ Եղեռնին»:*** Հայկական Մեծ Եղեռնին, Աստուած լացա՛ւ Իր չարչարող հաւատացեալներուն համար, այնպէ՛ս, ինչպէս լացած էր Իր Միածին Որդւոյն Յիսուսի Խաչելութեան:

Երկրորդ, մեզմէ քանի՞ անկեղծ ու ճշմարիտ անձեր ուսումնասիրած են, թէ ինչո՞ւ համար Անի մայրաքաղաքին մէջ հազար ու մէկ եկեղեցիներ կառուցուած էին: "Անին շտեմարանն էր Հայ հին դարերու ոճին և բանալին՝ իրմէ առաջ կորած գիտութեան ու պատմութեան առեղծուածը լուծելու" համար--Կ'ըսէ **Թ. Թորամանեան:** Ինչո՞ւ համար երբեք չէ յիշուած Հայ մեծահարուստներու անհաւատութիւնը և կրօնաւորներու նիւթապաշտութիւնը: Կարդանք. (Հայկ. Հանրագիտարան էջ 408).

«Մեծատու նները փարթամացել էին տնանկների քրտինքով, վաշխերով ու անիրաւութիւններով, անողորմ էին աղբաանների հանդէպ, հակված էին մեղկ (իզացող) կեանքի, չէին խորշում կեղտոտ գործերից»:

Հայ պատմաբան **Մատթէոս Ուլիաշեթցի** կը գրէ այն վիթխարի և հսկայ հարստութեան և հողերուն մասին, որոնք կը պատկանէին կղերականներու: **Պետրոս Կաթողիկոս** (1019-1059) թուականին ունեցած է 500 գիւղ և ուրիշ հարստութիւններ որպէս անշարժ կալուած և անձնական ստացուածք, որոնք

ծառանք ձգուած էին իրեն Հայ Թագաւորներէն և հարուստներէն: Նաեւ կը պատմուի իր մասին, թէ սիրահար էր դրամի և հարստութեան և ճոխութեան:

Անառակ Որդին երբ սնանկացաւ և պարտաւորուեցաւ դառնալ խոզարած, այդ Աստուծոյ պատիժը չէ՛ր, այլ իր հեռանա՛լը հօրէնական սուսէն՝ Աստուծմէ: Իսկ անոր ինքզինքին գալը, կը նշանակէ ապաշխարութիւն: Պօղոս առաքեալ եւս միացնելով իր ձայնը հաւաքակա՛ն առաքեալներու, կ'ըսէ. *«Ես միտքս չեմ դրած ձեր մէջ գիտնալ ուրիշ բան՝ քան միայն Յիսուս Զրիստոսը և նոյն ինքն իաջուածք»*:

Յիսուս Փրկիչ խաչուելով մե՛ր տեղը, ցոյց կու տայ մեզի, որ մե՛նք եւս սնանկացած ու Աստուծմէ հեռանալով դարձած ենք խոզարածներ (հոգ չէ թէ ձեռնադրեալ կամ աշխարհական մկրտուած հաւատացեալներ): Մենք ալ դիտելով Խաչեալ Յիսուսը, ուրանալո՛ւ ենք աշխարհը իր բոլոր հեշտանքներով: Նման Պօղոսի նայելո՛ւ ենք միայն խաչեցեալ Յիսուսի, ու սիրո՛ւ անձնագոհելու ենք մենք զմեզ, ու մեր հեշտալի ցանկութիւնները, որո՛ւ միայն կարելի է հետեւիլ և առաջնորդել ուրիշները դէպի Յիսուս Զրիստոսի:

Համայն աշխարհի Զրիստոնեայ հաւատացեալները կը պարծենան խաչեցեալ Յիսուս Զրիստոսի սրբարար Խաչով այնպէ՛ս ինչպէս Պօղոս առաքեալ կը պարծենար: Սակայն ներկայ հաւատացեալներու և առաքեալներու պարծանքին միջեւ կան անչափելի հեռաւորութիւն և դիրքաւորումներ: Առաքեալները, իրենց Տէրն ու Փրկիչ Յիսուսի սրբարար Խաչը չէին կախած իրենց կուրծքին վրայ: Առաքեալները, Մարդեղացեալ Յիսուսի Խաչը, չէին կանգնած Բարաշէն եկեղեցիներու աշտարակներու վրան, որպէս ճարտարապետական պարծանք: Յիսուս Զրիստոսը մահացնող խաչը, կերտուած չէր ադամանդակուռ ոսկիով կամ փլաթիւնով, այլ կոշտ և անտաշ փայտէ:

Առաքեալները, երբ կը Բարոզէին իրենց Վարդապետին Աւետարանը, իրենց ձեռներուն մէջ չէին կրեր ոսկեղէն կամ արծաթեղէն խաչեր, այլ՝ Յիսուսը սիրողներն ու Անոր աշակերտները, սրբարար Խաչը կը կրէին իրենց ***սրտի՛ն*** և մարմիններուն, իրենց ստացած ***վերքերո՛ւն*** վրայ: Ներկայ դարը կը խաչակնէ մկրտուողները մետաղեա՛յ խաչերով, իսկ առաքեալները մկրտեցին նորահաւատները. *«Տէր Յիսուս Զրիստոսի՛ անունով»* ու Խաչեցեալին զօրութեամբը:

Ներկայ դարը ջեղած է Գողգոթայի չարչարանքի նեղ ճամբէն, ու կը հետեւի կոապաշտական նիւթի և պարծանքի սնապարծ լա՛յն ճամբուն, որ կը տանի անէացման ու մեռելութեան: Եկեղեցիներու սոյն դրամապա՛շտ ջուայտանքին պատճառաւ, անստուեր Լոյս Յիսուս ըսաւ.

***«Մարդու Որդին երբ գալ, արդե՞տ հաւատաք
տիտի գտնէ՞ երկրի վրայ»***--Ղուկ. ԺԸ. 8:

Եթէ վերեւ գրուածները խիստ են և անընդունելի, կարծէ կարդալ

Հերան Զարոզը (Երանելիները) անգամ մը եւս--**Մասթ. Ե.3:**

«Երանի» հոգիով աղփասներուն, որովհետեւ անոնց է երկինքի արքայութիւնը: **Երանի**՝ սգաւորներուն, որովհետեւ անոնք Աստուծմէ մխիթարութիւն պիտի գտնեն: **Երանի**՝ հեզերուն, որովհետեւ անոնք պիտի ժառանգեն երկիրը: **Երանի**՝ անոնց, որոնք արդարութեան Բաղցն ու Ժարաւը ունին, որովհետեւ անոնք պիտի յազենան: **Երանի**՝ ողորմածներուն, որովհետեւ անոնք Աստուծմէ ողորմութիւն պիտի գտնեն: **Երանի**՝ անոնց, որոնք սիրտով մահուր են, որովհետեւ անոնք զԱստուած պիտի տեսնեն: **Երանի**՝ անոնց, որոնք իսաղաղութեան հաստատումին համար կ'աջխատին, որովհետեւ անոնք Աստուծոյ որդիներ պիտի կոչուին: **Երանի**՝ անոնց, որոնք կը հալածուին արդարութեան համար, որովհետեւ անոնց է երկինքի արքայութիւնը: **Երանի**՝ ձեզի, երբ մարդիկ նախատեն և հալածեն ձեզ, կամ ստելով՝ ձեր մասին ամէն տեսակի զրպարտութիւն ընեն Իմ հետեւորդներս ըլլալնուդ համար: Յնծացե՛ք և ուրախացե՛ք, որովհետեւ

ձեր վարձատրութիւնը մեծ է երկինքի մէջ:

Մայիս 17, 2002
Թորոնթօ

Ալպէր Նորասունկեան
Հայ-Քրիստոնեայ

“ԻՍ ՀՕՐՍ ՏԱՆ ՄԷՋ ՇԱՏ ՕԹԵԻԱՆՆԵՐ ԿԱՆ”

Ի՞նչ բանի կ'ակնարկէ Յիսուս Բրիստոսի. *“Իմ Հօրս տան մէջ”* ասոյթը: Ո՞ւր կը գտնուի Իր Հօրը *“տաւն”*, երկի՞նքը թէ երկրի վրայ, թէ ոչ նախարարա՞ն մը երկրի և երկինքի միջեւ կախուած:

Մեր Տէրը Յիսուս Բրիստոս, երկու տարբեր առիթներով գործածած է *“Հօրս տաւն”* բառերը: Առաջին անգամ երբ Ան 12 տարեկանին այցելած էր Երուսաղէմ Իր ծնողաց հետ ու ջարուհակած էր մնալ տաճարին մէջ խօսելու համար դպիրներու և կրօնաւորներու հետ: Իր մօր Ս. Մարիամի յուզումնալից արտայայտութեան. *“Մորդեա՛կ, այս ի՞նչ քրիթ դու ն մեզի. ահա ասիկ հայրդ ու ես տագնապած Տե՛զ կը փնտռէինք”*-ին, Յիսուս կը պատասխանէ.

***“Ինչո՞ւ կը փնտռէիք զիս, չէի՞ք գիտեր թէ ես Հօրս տունը պէտք է ըլլամ”*:**

Ս. Ղուկաս աւետարանագիր, իր կողմէ կ'աւելցնէ յետագայ յիշատակագրութիւնը. *“բայց անոնք չհասկցան այն խօսքը, զոր Ան ըսաւ իրենց”*: Երկրորդ առիթը, Ծաղկազարդի յաղթական մուտքը կատարելէ յետոյ, Յիսուս կ'ուղղուի դէպի Երուսաղէմի մայր տաճարը: Զատկի տօնին առիթը, Աստուծոյ տաճարը կը գտնէ առեւտրական և ջահավաճառական փերեզակատեղիի վերածուած: Հոգեկրօն պողոթնումի զգայնութեան մէջ կ'ողորէ իջուն պարանէ սանձը. *«Եւ կը սկսի դուրս վտարել աղանի վաճառողներն ու գնողները, և լումայափոխներու սեղանները կը ցրուէ ու կ'ըսէ անոնց.*

Գրուած է՝ իմ տունս պէտք է աղօթքի տուն ըլլայ իսկ դուք աւագակներու որջերու վերածած էք զայն--Ղուկ. ԺԹ.46:

Վերոյիշեալ երկու վկայութիւններու մէջ, մեր Տէրը կը մատնանշէ *“տաւն”* բառը որպէս Աստուծոյ տաճար՝ Եկեղեցին, աղօթքի՞ տունը: Ուստի, վերեւ յիշուած. *“Իմ Հօրս տան մէջ ջատ օթեաւաններ կան”* ասացուածքին *“տաւն”* բառը միթէ ընդհանրական Եկեղեցիին չ'ակնարկէ՞ր: Ինչո՞ւ ո՛չ:

Յիսուս Բրիստոսի խօսքերը առաւելապէս կ'իմաստաւորուին երբ զօդենք *“օթեւան”* բառը *“տան”* բառին հետ: Հետեւաբար կ'ունենանք *տուն մը բազմաթիւ օթեաւաններով՝* Եկեղեցի մը բազմատեսակ մշակոյթներով և ազգային երանգ ստացած աւանդութիւններով:

“Օթեւան” բառը ինքնին կը նշանակէ ***ժամանակաւոր*** հանգրուան՝ հալածուած, կեղեքուած ու նահատակուած անձերու համար: Եկեղեցին մշտնջենապէս հարստահարուած, և անպատսպառ պիտի չջարուհակէ մնալ, այլ

մահուան և սարսափի դէմ իր մղած պայքարը վերջ պիտի գտնէ Յիսուս Քրիստոսի յաղթական Վերադարձով:

"Օթեւան" բառին միխթարական և յուսարդիչ իմաստը մեզի ներքին ու հոգեկան խանդավարութիւն կը պարգեւէ: Նազովրեցի Մարգարէն Իր հետեւորդներուն նախապէս իմացուցած էր անոնց իրավիճակը ըսելով.

**«Այս աշխարհի մէջ նեղութիւն պիտի ունենա՞ք, սակայն
Բաջալերուեցէ՛ք, որովհետեւ ես յաղթեցի աշխարհին»
--Յով. ԺԳ.33:**

«Թող չխոսովին ձեր սրտերը»: Ինչ երկնաբաշխ ու հաղորդական խոստումներ ուր աստուածառաք Պատգամաբերը կը թափանցէ մարդկային հոգիին խորքը ու կը հաղորդակցի Իր աշակերտներուն հոգւոյն հետ: Ստեղծագործ Վեանքը կը ջանայ ներթափանցել հողայնութեան որ զայն դարձնէ հոգեղէնի ու յաւիտենականի: Եկեղեցին Աստուծոյ ներկայութեան գիտակցութիւնն ու հաղորդակցութիւնն է: Աստուծոյ ստեղծած տիեզերքը կը դառնայ *հաղորդութիւն* և յարաբերութիւն և ո՛չ միայն *ցուցադրութիւնը* գոյացութիւններու:

Հրեղէն Պատգամաբերը Իր բոլոր ուժագոյնեցիկ գորոյթը կը դնէ ու կ'ըսէ Իր աշակերտներուն.

«Հաւատացէ՛ք Աստուծոյ, հաւատացէ՛ք նաեւ ինձի»:

Եթէ չե՛ք կարող ըմբռնել զԱստուած, որովհետեւ անտեսանելի է, ուրեմն *«հաւատացէ՛ք Ինձի»*, ահա ես տեսանելի և ջօջափելի եմ: Ես կը ցուցնեմ զԱստուած, ես Անոր Մարդեղացեալ Յայտնութիւնն իսկ եմ:

Մարդկային կենցաղավարութեան մէջ *«առ ե՛»* բառը իմաստաւորած է գանազան նշանակութիւններ:

1. Հայրենիքէ հեռու բազմաթիւ ազգեր ստեղծած են իրենց ուրոյն մշակութային ու գաղափարական "տուն"ը՝ ակումբը: Այդ կեդրոնը պահած է զիրենք առողջ միասնականութեամբ մինչեւ վերադարձ իրենց հարազատ հայրենիքը: Բայց մինչ այդ, մշակութային կեդրոնը դարձած է իրենց հայրենի **տունը**:

2. Աղբատիկ գոյգ մը որ իրարու սէր և հաւատարմութիւն կը խոստանայ, կ'ամուսնանայ ու կը կազմէ իրեն տունը: այդ տունը կրնայ ըլլալ վարձուած *սենեակ* մը միայն որ կը ծառայէ թէ՛ խոհանոցի, թէ՛ ննջարանի և թէ՛ հիւրանոցի: Սակայն նախաինամութեան ջնորհիւ երբ նիւթապէս բաւարարուին անոնք, կը փոխադրուին ջֆեղ կառուցուածքով ու փառաւոր կարասիներով տուն մը: Վերոյիշեալ երկուքն ալ տուն են, մին կեանքի *սկզբնական* յոյսի և լաւատեսութեան ջրջանին, իսկ երկրորդը *հաւատի լքում*ն:

Բեկորեալ Հայ գաղթական ափսորեալներ աշխարհի բոլոր ծագերը ցիր ու ցան դարձած, ստեղծեցին հայ մշակութային աւանդական տունը՝ Հայ

Եկեղեցին և հայ դպրոցը որպէս հայրենիքի տուն: Այս կեդրոնները գաղափարական տեսիլքն են այն տիտան և անձնուրաց հայրենասէրներուն, որոնք *հաւատացած* էին որ հայ ազգը պիտի ունենայ իր հայրենիքը, իր ուրոյն պետական իշխանութեամբ և դրօշով: Այդ երազն ու տեսիլքը, թէեւ ուշացաւ, սակայն առարկայական կերպով ու գերահրաշ գօրութեամբ այսօր շօշափելի իրողութիւն մը դարձած է:

Նոյնն է նաեւ հաւատացեալներու հոգեւոր հայրենիքը՝ Զրիստոսի Եկեղեցին: Ի՞նչ համեստ սկզբնական միջավայր: Պարզ և անշուք վերնատուն մը, սակայն լեցուած *միասնակցան* և զոհաբերութեան ոգիով: Այդ անբարունակ վերնատան մէջ էր որ Սուրբ Հոգին հաճեցաւ իջնել ու հանգչիլ Տիսուսի աջակերտներուն և Զայն բոլոր սիրողներուն վրայ, որպէս հրեղէն Լեզուներ: Այդ համեստ վերնատան եկեղեցին վերածուեցաւ տուն հաւաքավայրերու, գետնափոր ժողովարահներու, կեդրոններու, հաստատութիւններու և ի վերջոյ Բարաշէն կառոյցներու, որոնց երկնասլաց խաչերը Ս. Էջմածնայ գմբէթէն վեր կուղղեն մեր հոգիները դէպի արարիչ Աստուծոյ:

Աշխարհի բոլոր եկեղեցիներն ալ իրենց Բարաշէն ամբակուռ կառոյցով ու հոյակապ Բանդակներով ու անմրցելի գեղանկարչութեամբ Հոգեւոր Հայրենիքին **ցոլացումներն** են միայն: Բուն իրականը, անվիճելին ու անխորտակելին, մեր Փրկիչ Զրիստոսի պատրաստածն է, որ պիտի յայտնուի իր լրումին: Ազատ և անկախ հայրենիքի մը համար, մենք հայերս, սպասեցինք աւելի քան 6 դարեր, որոնց ընթացքին բազմաթիւ հերոսներ և Բաջեր մահացան առանց տեսնելու մարմնացումը իրենց երազին և զոհողութեան:

Նոյնն է պարագան նաեւ մեր հաւատքի Հոգեւոր Հայրենիքին: Զարը կրնայ կործանել մեր վանքերն ու սուրբ եկեղեցիները: Ան կրնայ փոշիացնել անոնց ճարտարապետական ու հանճարի գեղեցկութիւնները, սակայն այդ կործանած ու Բանդուած Բարերն իսկ *Նառա և* վկաներն են հայ հաւատքին ու նուիրումին: Մեր հոգեւոր հայրենիքի աւերակներուն վրայ արարչական **Ճո՛ւնչ** կայ տակաւին: Անոնց մէջի աղօթողները կրնան գլխատուած ըլլալ կամ այրած, սակայն այսօր անոնց Բարերն են որ կը խօսին թերահաւատներուն:

Այդ Բարերը կ'աղաղակեն ով հայ հաւատացեալ: Անոնք կ'աղաղակեն այն աներեր հաւատքը, տեսիլքը և յոյսը, որ ստեղծեց հայ գիրն ու գրականութիւնը և դարձաւ աւիջն ու գրականը հայ ազգին գոյատեւման: Այդ Բարերը կ'աղաղակեն, որ մեր Տէրը՝ Զրիստոս Ինք պիտի՝ *վերադառնայ* **«Գալոց է նովին մարմնովն և փառօք Հօր 'ի դատել զկենդանիս և զմեռեալս, որոյ թագաւորութեանն ոչ գոյ վախճան»**--ն. Հանգանակ:

«Թող ձեր սրտերը չխորովին հաւատացէ՛ք Աստուծոյ, հաւտացէ՛ք նաեւ ինձի: Իմ Հօրս տան մէջ ջատ օթեալներ կան, թէ ոչ ես ձեզի ըսած կ'ըլլայի թէ կ'երթամ ձեզի

համար տեղ պատրաստելու. և եթե երթամ ու ձեզի համար ալ տեղ պատրաստեմ, դարձեալ կու գամ և քովս կ'առնեմ ձեզ, որպէսզի ուր որ ըլլամ ես, այնտեղ ըլլաք նաեւ դուք:--Յով.

ԺԴ. 1-3:

Երկա՛ր է ուխտագնացութիւնը, դժուա՛ր է ճանապարհը, բայց հաւատքի սուրբ Լոյսը Առաջնորդ է մեզ մինչեւ Տուն: Երկինք նայող մեր հաւատքը ի վերջոյ պիտի յաղթանակէ ու մենք պիտի տեսնենք հրեջտակաց բանակները և Զօրավար Քրիստոս, որոնք օգնութեան պիտի հասնին հաւատացեալ փոքրամասնութեան: Անոնք պիտի ցնծերգեն որոտումներ ու հրեղէն բոմբիւններ ճշմարտութեան և յաղթութեան, որովհետեւ այն ատեն տեսանելի պիտի ըլլայ յաւերժական Տունն երջանիկ:

Այդ **"Տան"** մէջ պիտի միանանք մեր սիրելիներուն և անհամար սուրբ նահատակներուն, որոնց արիւնը աննկուն պահեց մեր հաւատքը և սերը առ Աստուած:

Ի՞նչ տպաւորութիւն պիտի թողուն մեր ներկայ մակերեսային աշխատանքները մեր եկեղեցական հայրերուն, Վարդանանց նահատակներուն և հայ Թարգմանչաց յոյին: Հայ նուիրեալներն ու վկաները արդեօք պիտի ընդունին՞ մեզ որպէս իրենց ժառանգաւոր յաջորդները...:

Վերոյիշեալ հարցումին պատասխանը, միայն անկեղծ ընթերցողը ի՞նք կրնայ տալ: Մի՛ ուշացներ պատասխանդ:

Յուլիս 5, 1993

Թորոնթօ

“ԱՅՍ ՅԻՍՈՒՍԸ ՈՐ ԵՐԿԻՆՔ ՀԱՄԲԱՐՁԱԿ, ՕՐ ՄԸ ԳԱՐՁԵԱԼ ՊԻՏԻ ԳԱՅ ԱՅՆՊԷՍ՝ ԻՆՉՊԷՍ ԱՆՈՐ ԵՐԿԻՆՔ ԵՐԹԱԼԸ ՏԵՍԱՔ”

--Գործք Ա.11:

Ինչպես որ Յիսուսի Մարդեղութիւնը և կոյսէ Մարմնանալը մարգարեացուած դէպք և իրողութիւն դարձաւ, նոյնպէս ալ եղելութիւն պիտի ըլլայ Անոր Վերստին Գալը երկրի վրայ: Տէրունական աղօթքի սկզբնաւորութեան, ըստ Յիսուսի պատուերին, աջակերտները կ'աղօթեն. «Զու թագաւորութիւնդ **թող գայ. բու կա՛մքդ թող ըլլայ երկրի վրայ** ինչպէս որ է երկնքի մէջ»: Յիսուս կը պատուիրէ Իր աջակերտներուն, թէ ի՛նչ պարտ են խնդրել ամէնէն առաջ: Ան կ'ըսէ. *«Խնդրեցէ՛ք նախ Աստուծոյ թագաւորութիւնը և իր արդարութիւնը, և այդ բոլորը աւելիո՛վ պիտի տրուին ձեզի»*--Մատթ. 2.33:

Բոլոր ա՛յն ազգերը որոնք ունէին հայրենապիրութիւն ու տեսիլք, երկրորդ Պատերազմէն յետոյ, վերակառուցին իրենց քանդուած հայրենիքը և բոլոր եկեղեցիները: Նոյնպէս նաեւ Յիսուս երբ յաղթահարէ չարը, պիտի վերադառնայ այս աշխարհ, վերակառուցանելու համար բոլոր այն բարոյական քանդումները ու նաեւ ֆիզիքապէս աներակուած երկրագունդը, որովհետեւ այս աշխարհ կը պատկանի Իրեն: Ի՛նքն էր Տէ՛րն ու ճարտարապետը այս երկրագունդ աշխարհին:

Յիսուս Զրիստոս ոչ միայն պիտի վերակառուցանէ աշխարհը ֆիզիքապէս ու բարոյապէս, այլ պիտի յարուցանէ այն բոլոր նահատակ հաւատացեալները որոնք փակեցին իրենց աչքերը Յիսուսի՝ հաւատալով: Որովհետեւ Յիսուս խոստացաւ բոլոր Իրեն հաւատացողներուն ըսելով.

«Խնդր՛ւ կը զարմանա՛մ. որովհետեւ պիտի գայ ժամանակ, երբ բոլոր անունք՝ որ գերեզմաններու մէջ են՝ պիտի լսեն Անոր ձայնը և դուրս պիտի ելլեն. անունք՝ որ բարի գործեր ըրած են՝ կեանքի յարութեան համար, իսկ անունք՝ որ չար գործեր ըրած են՝ դատաստանի յարութեան համար»--Յով. Ե.28-29:

Օր մը երբ աջակերտներ հաւաքուած ու մտերմիկ խօսակցութիւն կ'ունենային Յիսուսի հետ, Պետրոս ըսաւ Յիսուսի. «Ահա մեր ամբողջ ունեցածը ձգեցինք և հետեւեցանք Զեզի. մե՞նք ինչ պիտի ըլլանք»: Յիսուս պատասխանեց.

«Երկրորդ Գալուստին երբ Մարդու Որդին իր փառքի աթոռին բազմի, դուք որ ինձի հետեւեցաք՝ պիտի բազմիք տասներկու գահերու վրայ, դատելու համար Իսրայէլի տասներկու ցեղերը: Եւ ով որ ձգեց տուն, եղբայրներ, բոյրեր, հայր ու մայր, ու զաւակներ և ազարակներ՝ Ինձի համար, հարիւրա-

պատիկը պիտի ստանայ և յաւիտենական կեանքը ժառանգէ.--**Մատթ. ԺԹ. 27-29:**

Յիսուսի վերոյիջեալ հօօր և անփոփոխելի խօսքերն էին, որոնք Բաջալեքեցին հաւատացեալները նահատակուելու և հաւատարիմ մնալու իրենց Փրկչին և հաւատփին: Ահարի ճանապարհին, ինչո՞ւ Հայերը թողուցին տուն տեղ ու պապենական կալուած ու Բալեցին դէպի տաժանելի մահ: Որովհետեւ անոնք հաւատացին Յիսուս Զրիստոսի խոստումին, թէ մեռելոց յարութենէն յետոյ, Ան պիտի վերադարձնէ իրենց պապենական ազարակները աւելիով ու իրենց առեւանգուած ու թրքացած զաւակները պիտի դառնան հաւատփի:

Զրիստոնեաները կոյր հաւատփով չի նահատակուեցան, այլ իրենց հաւատքը դարձած էր տեսութիւն: Անոնք կը տեսնէին **“երկինքը բացուած”** ու իրենց ապագայի արեւաջող երջանկութիւնը իրենց Փրկչին խօսքերուն մէջ: Յիսուս նախաձայնած էր Իրեն հետեւողներուն.

«Այս աշխարհի մէջ նեղութիւն պիտի ունենաք, սակայն Բաջալեքուեցէ՛ք, որովհետեւ ես յաղթեցի աշխարհին»:

Պօղոս առաքեալ իր գլխատուելէն ու նահատակուելէն առաջ, կը գրէ Թեսաղոնիկէի Եկեղեցիի հաւատացեալներուն ու կ'ըսէ.

«Եղբայրներ, չեմ ուզեր որ անգէտ ըլլաք ննջեցեալներու մասին, որպէսզի չտխրիք ուրիշներու նման, որոնք յոյս չունին: Եթէ կը հաւատանք թէ Յիսուս մեռաւ և յարութիւն առաւ՝ այդպէս ալ Աստուած ետ պիտի քերէ ննջեցեալները Յիսուսի միջոցով, անոր հետ»--Պ.12: Պօղոս առաքեալ կը շարունակէ.

«Եթէ միայն այս կեանքին համար յոյս դրած ենք Զրիստոսի վրայ՝ ողորմելի ենք Բան բոլոր մարդիկ: Բայց արդ, մեռելներէն յարութիւն առած է Զրիստոս՝ ննջեցեալներու առաջին պտուղը...Ինչպէս որ Արամով ամէնքը կը մեռնին, այնպէս ալ Զրիստոսով ամէնքը պիտի կենդանանան՝ իւրաքանչիւրը իր կարգին: Նախ Զրիստոս և ապա Զրիստոսին պատկանողները՝ Իր Գալստեան ասեմ. և ապա պիտի գայ վախճանը, երբ որ ան տայ թագաւորութիւնը Աստուծոյ և Հօր ձեռքը, որ կործանած ըլլայ բոլոր իշխանութիւնները և ամէն պետութիւն ու զօրութիւն. որովհետեւ ան (Յիսուս) պէտք է թագաւորէ մինչեւ որ բոլոր թշնամիները դնէ իր ոտքերուն տակ: Վերջին թշնամին որ պիտի կործանի՝ մահն է. և Աստուած ամէն ինչ հնազանդեցուց՝ դնելով անոր ոտքերուն տակ: Վերջին թշնամին որ պիտի կործանի՝ մահն է»--Ա. Կոր. ԺԵ.26:

Յիսուս ըսաւ Թովմասին. **«Ես եմ ճանապարհը և Ճշմարտութիւնը և Կեանքը: Ոչ ոք Հօրը կրն գայ, եթէ ոչ ինձմով: Եթէ ճանչնայիք զիս՝ պիտի ճանչնայիք նաեւ իմ Հայրս»:** Եթէ Զրիստոնեայ առաջնորդներ իրենց կեանքին և ապրումին մէջ ցոյց տային Յիսուս Զրիստոսի սերը, համբերութիւնը, ողորմութիւնը և անձնագործողութիւնը, աշխարհ այսօր Զրիստոնեայ դարձած պիտի ըլլար:

Սեպտեմբեր 11, 2003, Թորոնթօ